ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատավան, azatavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 20-Ն

ԱԶԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով, ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի 12-14-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան ,, Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ,,Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգը,,՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

Ազատավան համայնքի ավագանու 27.06.2018թ

N 20-Ն որոշման

Կարգ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Համայնքի բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են ՏԻՄ օրենքի 11-րդ հոդվածով ՀՀ այլ օրենքներով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգով, որը առնվազն պետք է սահմանի.

1/Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին բնակիչների իրազեկվածության ապահովման անհրաժեշտ պայմաններ

2/ Այն բավարար պայմաններն ու չափանիշները, որոնք անհրաժեշտ են գործնականում ապահովելու համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում՝ ապահովելով նաև համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժուն խմբերի մասնակցությունը:

1. Սույն կարգով կարգավորվում են համայնքում՝տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է՝ ապահովել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում՝ երաշխավորելով հանրային տեղեկատվության լիակատար թափանցիկությունն ու մատչելիությունը:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության , տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Տեղական

ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

3. Սույն կարգի խնդիրներն են՝

ա. Հստակեցնել համայնքի մասնակցային կառավարման համակարգում շահագրգիռ բոլոր կողմերի դերերը և պարտականությունները,

բ. Համայնքում հիմնել և կիրառել բնակիչների մասնակցության գործուն կառուցակարգեր, ընթացակարգեր, գործընթացներ և ձևեր,

գ. Զնավորել համայնքի կառավարման նոր, քաղաքացիամետ մոտեցումներ,

դ. Համայնքի բնակիչների համար ստեղծել հնարավորություններ ակտիվ մասնակցություն ունենալու համայնքի կառավարման և զարգացման գործընթացում

ե. Ապահովել համայնքում առկա շահերի հավասարաչափ ներկայացումը և հավասարակշռումը որոշումների կայացման գործընթացում

զ. Ապահովել համայնքում փոխվստահության մթնոլորտ:

4.Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության սկզբունքներն են՝

1/ մատչելիություն

2/ վստահություն

3/ թափանցիկություն

4/ հրապարակայնություն

5/ ակտիվությունն

6/ օպերատիվություն և արագ արձագանքում

7/ արդյունավետություն

8/ պատասխանատվություն և հաշվետվողականություն

5. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը տարածվում է համայնքի բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

6. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են

1/ Մասնակցային ժողովրդավարություն՝ գործընթաց, որն ընդգծում է բնակչության լայն մասնակցությունը համայնքային քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը.

2/ Բնակիչների մասնակցություն՝ գործընթաց, որի միջոցով բնակիչները որոշակի ներգործություն են ունենում իրենց կյանքի վրա անմիջականորեն ազդող համայնքի ՏԻՄ-երի որոշումների վրա

3/ Բնակիչների նախաձեռնություն՝ գործընթաց, որի նպատակն է բնակիչների ձայնը լսելի և խնդիրները տեսանելի դարձնել ՏԻՄ-երին, կամ գրավոր փաստաթուղթ՝ դիմումի, բողոքի, առաջարկության կամ նախագծի տեսքով, որը ստորագրվում է բնակիչների կամ նրանց խմբի կողմից և հասցեագրվում ՏԻՄ-երին:

4/ Ընդունելություններ և „բաց դռների„ ծրագրեր՝ գործընթացներ, որոնք իրականացվում են համայնքի ղեկավարի և ավագանու անդամների մոտ՝ նախօրոք սահմանված ժամանակացույցերի համաձայն, բնակիչների կամ նրանց պատվիրակությունների ընդունելություններն այցելություններ կատարելումիջոցով: այս գործընթացների նպատակն է խթանել և քաջալերել բնակիչներին, որպեսզի նրանք առանց որևէ պատճառի կամ նպատակի այցելեն ՏԻՄ-երի նստավայր նրանց գործունեությանը ծանոթանալու և իրենց հուզող խնդիրները բարձրաձայնելու համար:

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՐԵՐԸ և ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1.Համայնքի ավագանին քննարկում և որոշում է կայացնում տեղական ինքնակառավարմանը բնակիչնեչի մասնակցության կարգը հաստատելու մասինն օժանդակում, վերահսկում համայնքում այդ կարգի ներդրմանը և իրականացմանը:

2. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը խրախուսելու համար կարող են սահմանել „ Համայնքի ակտիվ բնակիչ „մրցանակը:

3. Ավագանուն „ Համայնքի ակտիվ բնակիչ„ խրախուսական մրցանակի շնորհման համար թեկնածուներ կարող է առաջադրել համայնքի ղեկավարը և նրան կից գործող խորհրդակցական մարմինը:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

4. Համայնքի ղեկավարը ստեղծում է բավարար պայմաններ և հնարավորություններ բնակիչների լինելու իրազեկ ՏԻՄ-երի գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն և զարգացմանը, մասնավորապես հետևյալ գործընթացներում՝

1/ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության օրենսդրական դրույթների լիարժեք կիրառում և կատարում

2/ իրավական ակտերի նոր նախաձեռնությունների քննարկումներ

3/ Համայնքի զարգացման ռազմավարությունների և ծրագրերի տարեկան հնգամյա մշակում, քննարկում, իրականացում և վերահսկում

4/ Համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների գործունեության, ներառյալ դրանց ստացված արդյունքների և շահառուների վրա ազդեցության, մշտադիտարկում /մոնիթորինգ/ և գնահատում

5/ Համայնքի բյուջեի նախագծում, կազմում, քննարկում և վերահսկում

6/ Համայնքային ծառայությունների մատուցումը բարելավելու վերաբերյալ

7/ Տեղական տուրքերի, հարկերի վճարների դրույքաչափերի, համայնքային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճարների չափերի, դրանց հավաքագրման առկա խնդիրների և քաղաքականության վերաբերյալ քննարկումներ

8/ Տեղական ինքնակառավամանը բնակիչների մասնակցության այլ գործընթացներ:

9/ Համայնքի ղեկավարն ապահովում է ընդունված տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի իրագեկումը համայնքում առկա բոլոր բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ հաշմանդամներիրն և տնային տնտեսուհիներին:

2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ

10/ Համայնքի մասնակցային կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների կամ նրանց խմբերի մասնակցությունը կարող է լինել հետևյալ ուղղություններով՝

1/ Մասնակցություն ՏԻՄ-երի կողմից կազմակերպվող և անցկացվող հանրային քննարկումների, հանդիպումներին, ժողովներին, հավաքներին, ժողովներին, հարցումներին և հանրային միջոցառումներին

2/ բնակիչների ներգրավվածություն տեղական ինքնակառավարմանը

3/ Համատեղ աշխատանք

4/ Հետադարձ կապ համայնքային ծառայությունների մատուցման որոկի և մատչելիության բարելավման աշխատանքներում

3. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերը և իրականցման միջոցները

ա/ Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը իրականացվում է երկու եղանակով՝ պասսիվ և ակտիվ: Պասսիվ ձևերից են բնակիչների ծանուցումը, իրազեկումը և (կամ) կրթումը: Ակտիվ ձևերից են բնակիչների ներգրավումը համայնքի կառավարման և զարգացման, ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացներում՝ հնարավորություն տալով բնակիչներին ներազդելու դրանց վրա, բնակիչների կարծիքի հարցումը և բնակիչներից տեղեկատվության հավաքագրումը:

3.1 Տեղեկացման (իրազեկման) և կրթության ձևեր (պասսիվ)

3.2 Տեղեկացման և կրթության ձևերն օգտագործվում են բնակիչներին միայն տեղեկացնելու և կրթելու համար: Մասնակցության այս ձևերն օգտագործելիս բնակիչների կարծիքներն և գաղափարներն իմանալու անհրաժեշտություն չի զգացվում

3.3 Բնակիչների տեղեկացման և կրթության ձևերի թվին են դասվում .

ա/ Հանրային տեղեկատվությունը, այդ թվում՝

հայտարարությունները տեղական զանգվածային լրատվության միջոցներով ԶԼՄ-ներ

տեղեկատվություն ՏԻՄ-երի կողմից համայնքի տարածքում ծրագրվող տարատեսակ միջոցառումների մասին

ա/սոցիալական ցանցերում տեղադրված հայտարարությունները

բ/հանրային զեկույցները և հաշվետվությունները

գ/ընդունելությունները և „բաց դռների„ ծրագրերը

դ/հանրային ժողովներ և շահագրգիռ անձանց հետ հանդիպումներ, որոնք կազմակերպվում են համայնքային որևէ կոնկրետ հարցի կամ նախագծի վերաբերյալ հանրային լայն շրջանակի տեսակետների կամ կարծիքների արտահայտման համար հնարավորություն ստեղծելու նպատակով: Դրանք կազմակերպվում և անց են կացվում ոչ պաշտոնական մթնոլորտում: ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հարցումներն անց են կացվում որևէ հարցի կամ նախագծի վերաբերյալ բնակիչների կարծիքներն ու տեսակետներն պարզելու նպատակով : Հարցումները կարող են վերաբերվել ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների որակին, որին կարող են ընդգրկվել համայնքի բոլոր բնակիչները կամ առանձին խմբեր:

ՏԻՄ-երի կողմից նախաձեռնվող հարցումները կազմակերպվում և անց են կացվում հետևյալ ընթացակարգով՝

ա/ նախապես մշակվում է հարցաշարը՝ կազմված պարզ և հստակ ձևակերպված հարցերից

բ/ հարցումները կարող են անցկացվել հեռախոսազանգերով, բնակարան այցելություններով, բջջային հաղորդագրություններով, էլ. փոստով

գ/ հարցումներ իրականացնող խումբը վերլուծում և ամփոփում է հարցման արդյունքները, դրա վերաբերյալ կազմում զեկույց և ներկայացնում համայնքի ղեկավարին

դ/ համայնքի ղեկավարը ծանոթանալով զեկույցին հրապարակում է այն, ներկայացնում ավագանու քննարկմանը, իսկ անհրաժեշտության դեպքում այդ հարցի վերաբերյալ նախկին որոշումը վերանայում

4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Բնակիչների մասնակցության ձևերի կիրառման նպատակներից են՝

ա/ Տեղեկացնել բնակիչներին ՏԻՄ-երի գործունեության մասին , որպեսի նրանք մասնակցեն ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացին

2/ կրթել բնակիչներին , որպեսի նրանք ավելի խելամտորեն վերաբերվեն ՏԻՄ-երի նախաձեռնություններին, կարողանան գնահատել խնդիրների լուծման այլընտրանքների առավելություններն ու թերությունները

3/ ներգրավել բնակիչներին համայնքի պլանավորման և բյուջետավորման գործընթացներում՝ նրանց մասնակցությունը համայնքի ապագայի տեսլականների,լ ռազմավարությունների, ծրագրերի և բյուջեների մշակմանը ապահովելու նպատակով

4/ խորհրդակցել բնակիչների հետ, որպեսզի պարզվի նրանց կարծիքը ՏԻՄ-երի նոր նախաձեռնությունների վերաբերյալ, դրանց սոցիալական ազդեցությունը նրանց վրա և ճշտվեն ՏԻՄ-երի հետագա գործողությունները

5/ Ներգրավել բնակիչներին ՏԻՄ-երի որոշումների կայացման գործընթացում՝ ապահովելով նրանց ուղղակի մասնակցությունը համայնքի կառավարմանը և զարգացմանը:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևի ընտրությունը սահմանում է համայնքի ղեկավարը

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

1. Սույն կարգը վերանայվում է տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում ՀՀ օրենսդրությունում կատարված էական փոփոխությունների և կամ լրացումների , մասնակցության նոր ձևեր կիրառելու անհրաժեշտության դեպքում: Մասնակցության կարգի մեջ փոփոխությունների կամ լրացումների կատարումը, դրա գործունեության դադարեցումը իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ, համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ընդհանուր կանոններն ու դրույթները:

2. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կոնկրետ ձևերը կանոնակարգող կարգերի նախագծեր բացի ՏԻՄ-երից կարող են մշակել և ՏԻՄ-երի քննարկմանը և հաստատմանը ներկայացնել նաև համայնքի բնակիչները:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄՀԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՏՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ